ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻՑ

Ք.Երևան | **10 մայիսի 2019թ.**
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար (հանձնաժողովի նախագահ)՝ Գ. Ավետիսյան

Անդամներ՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության պետ՝ Ա. Հովհաննիսյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Շաբոյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ՝ Լ. Միքայելյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ՝ Հ. Շեկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների գործակալ՝ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված՝
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ – 1728000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:

1. Տեղեկություն հայտերի բացման օրվա և ժամի մասին

1.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են, մայիսի 10-ին ժամը 11:00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և էլեկտրոնային փոստի հասցեները.

Հ/Բ N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«Վի իքս Սոֆթ» ՍՊԸ	info@vxsoft.com

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

3.1 Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
3.2 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
3.3 Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3.4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3.5 Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
3.6 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.1 Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

3.1.1 «Վի իքս Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3.2 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:

3.2.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «Վի իքս Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.
1) Պիտանելիության չափորոշիչ՝
ա) դիմում ԳՀ մասնակցելու մասին (*Հավելված 1*)
բ) հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին (*Հավելված 2*):
գ) տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին (*Հավելված 2.1*)
2) Տեխնիկական չափորոշիչ՝
ա) հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին (*Հավելված 3*)
3) Ֆինանսական չափորոշիչ՝ գնային առաջարկ (*Հավելված 4*):
3.2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
3.2.3 «Վի իքս Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3.3 Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

3.3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Բ	Ծառայության		«Վի իքս Սոֆթ» ՍՊԸ		
	անվանումը	Նախահաշվային արժեք	Գումարն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում	**1 728 000**	1 440 000	288 000	1 728 000

3.4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

3.4.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վի իքս սոֆթ» ՍՊԸ-ին:

3.4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում 13.05.2019թ. ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.5 Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

3.5.1 Հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.6 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3.6.1 Հաջորդ նիստը հրավիրել ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 շենք, 4 սենյակ հասցեում ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

4. Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Գ.Ավետիսյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Ա. Հովհաննիսյան	ԳՊ/ԳԱ
	Ա. Շաբոյան	ԳՊ/ԳԱ
	Լ. Միքայելյան	ԳՊ/ԲԱ
	Հ. Շեկոյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀՄ